

« Եղեւ վճար բանիս այս ներբողական.
Յակոբայ, Յովսէփայ և եղբարցն ամենայն,
կարգաւ ըզպատմութիւնըն վկայական,
Գիրահաւան մանկանց նոր ուսումնական: »

Ի Հայոց տումարի հազար թուական,
Ինըսուն և մին յարաբարդեալ կան,
Տաղաչափ շինեցաւ բանըս պատմաբան,
Ոչ յինքենէ մըտաց այլ որոց ծնընդեան: »

Ի կըղզիս վիսէճի ծով անտական,
Ղարիպութիւն յերկիրս ի ֆոանգստան,
Այն որ Յովսէփ հասուց փառս ւ՛ ի իշխանութեան,
Հասցնու գամէն դարիպ իւր նաւահանգստեան: »

Նուաստ յոգի Աստուածատուր անարժան,
Որ ըսկիզբն բանիս եւս կատարման,
Լաւով գձեզ աղաչեմ ընթերցողք սրբազան,
Որք լի սրտիւ ասէք վասն իմ գՀայր մեղան: »

Փառք քեզ Հայր և Որդի, Հոգիդ շնորհական.
Որ տաս զհայցուածք սրտի որք առ քեզ կարդան,
Պարտիւք վեր առաքել փառ անլուական,
Յանցեալ այժմոյս յաւետ յաւիտեանական: »

Թուականը 1091, հաւասար է այժմու
փրկչական 1642ին, երբ ի վենետիկ Աս-
տուածատուր կը գրէ իր այս տաղը: Գրծ-
բախտաբար այս Աստուածատուրի ինք-
նութիւնն անձանօթ կը մնայ ինձի. Հ.
Ալիշանի «Հայ-վեհեստ»ին մէջ ալ չի յիշ-
ուիր:

*
* *

Ծանօթութեան պատառիկ մըն ալ՝ վե-

նետահայ գաղութին մասին՝ կը գտնեմ
ուղեգրութեանց մէջ, Maximilian Mis-
sonի որ 1687-88 թուականներուն Եւ-
րոպայի զանազան կողմերն այցելեց ի մէջ
այլոց նաեւ Վենետիկ՝ որուն մասին կը
վկայէ թէ կրօնական բացարձակ ազատու-
թիւն կը վայլէր «Այդ պատճառաւ իսկ
Յոյները, Հայերը և Հրեաները թոյլա-
տրուած են հրապարակաւ կատարել իրենց
կրօնական սովորութիւնները՝: Յետոյ կ'ա-
ւելցընէ. «Իս կարելի լաւագոյն հարցա-
պնդումս ըրի Հայոց դաւանանքի մասին,
բայց որովհետեւ իրենց Եկեղեցին ներ-
կայիս կը նորոգուէր, ես առիթ չունեցայ
իրենց պաշտամունքին ներկայ ըլլալ. և
ոչ ալ ճշմարտութիւնը ուրիշներէն տեղա-
կանալ. բայց, ինձի բարեկամ մը ըսաւ
որ, անոնք շատ տարբեր կարծիք ունին
քանի մը կէտերու մէջ՝: »

Missonի յիշած վենետիկի Հայ եկե-
ղեցին, բաղաբն «Հայոց Ս. Խաչ» կոչ-
ուած եկեղեցին է, որ ըստ Հ. Ալիշանի
արդէն բազմացած վենետահայ գաղութին
նիւթական միջոցներով իսկ անոր նորո-
գութեան ձեռք կը զարնուի 1682ին և
հազիւ կ'աւարտի 1688ին. իսկ 1689ի
8 Յունուարին «մեծահանդէս փառօք օծուե-
ցաւ» (Հայ-վեհեստ, էջ 594):

Յ. ՔԻՐԻՍԵԱՆ

Wichita, Kansas. U. S. A.

1. A complete Collection of Voyages and Tra-
vels. — by John Harris, London 1764. — Vol.
I. էջ 541. Բ. սիւն.
2. Ան, էջ 542, Բ. սիւն.